ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Տնօրենի ժպ՝ Ա. Դարագյոզյան
<<01>> Օգոստոս 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ ԲԱԳՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» (ՊՈԱԿ)-Ի

XII դասարանի

<<2022-2023>> ուսումնական տարի

Դասղեկ՝ Անահիտ Հարությունյան

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուրբնութագիրը)

Դասարանում կա 13աշակերտ՝9 տղա, 4 աղջիկ: Աշակերտները միաժամանակ տարբեր են և նախասիրություններով և ցուցաբերած առաջադիմությամբ , գիտելիքներով, սակայն համերաշխ են , ընկերասեր, համախմբված: Կան գերազանց սովորողներ , հարվածայինների թիվը մեծ է: Աշակերտները բարձր պատասխանատվություն ունեցող, աշխատասեր և պարտաճանաչ են: Օգնում են միմյանց դժվարին պահերին, կոնֆլիկտներ չեն ստեղծում , առողջ մթնոլորտ է :

2.Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Երեխայի դաստիարակությունն իրականացվում է հիմնականում երեք միջավայրերում՝ ընտանիք, դպրոց, շրջապատ: Սրանցից իր կարևորությամբ և առաջնայնությամբ առանձնանում է դպրոցը, որտեղ երեխան անցկացնում է իր ժամանակի մեծ մասը : Ժամանակակից դասղեկը կիրառում է դաստիարակչական աշխատանքների ոչ միայն հայտնի ձևեր և մեթոդներ, այլև ընդգրկում է աշակերտական կոլեկտիվի հետ աշխատելու նոր մեթոդներ, որոնք կարող են ծնվել՝ ելնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններից: Աշխատանքի մեթոդներն ու ձևերը բազմաթիվ են, օրինակ՝ զրույց, բանավեճեր, դերային խաղեր, ցերեկույթներ, մրցույթներ, արշավներ և էքսկուրսիաներ, գրական ունկնդրումներ, հասարակական աշխատանք և այլն: Դրանց մի մասը իրականացվում է դասղեկական ժամերի ընթացքում կամ արտադասարանային, արտադպրոցա կան պարապմունքների ու միջոցառումների ժամանակ:

1.1 - Հոգևոր դաստիարակություն – Հոգևոր դաստիարակությունը դպրոցական տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: այն նպատակ ունի սերմանել բարոյական արժեքներ: Հոգևոր դաստիարակությունը պետք է ուղղված լինի սովորողին ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցելուն:

- Գեղագիտական դաստիարակություն - Գեղագիտական դաստիարակությունը սերն ու արգանքն է գեղեցկության նկատմամբ: Այն կազմում է մարդու ընդհանուր զարգացվածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը , այնքան ամուր է մարդ-արվեստ, բնություն-մարդ կապը: հարկավոր է, որ սովորողն այցելի այնպիսի վայրեր, որոնք կնպաստեն նշված արժեքների ձևավորմանը:

1.1 - Ռազմահայրենասիրականդաստիարակություն

Երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի դպրոցից, դրա բացակայությունը սպառնալիք է, եթե մեկ ընդհանուր գաղափարի ներքո չեն համախմբված, այն պատշաճ ձևով չի իրականացվում:

1.2– Ֆիզիկական դաստիարակություն

Անհրաժեշտ է կազմակերպել սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանն ուղղված միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ:

1.3– Աշխատանքային դաստիարակություն

Դպրոցի դաստիարակչական իդեալը բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորությունն է , հասարակական առաջադիմության ակտիվ մասնակիցը: մարդու բազմակողմանի զարգացման համար առանձնապես կարևոր է աշխատանքի և մտավոր կյանքի միասնությունը:

1.4 – Բնապահպանական դաստիարակություն

Բնությունը, բնական արժեքները կարևորելու և պահպանելու ուղղությամբ անհրաժեշտ է կազմակերպել էքսկուրսիաներ, ուսումնասիրություններ, քննարկումներ բնապահպանական հիմնախնդիրների թեմայով:

1.5 - Դպրոց-ընտանիքկապը

Շատ կարևոր է կապը դպրոցի և ընտանիքի միջև՝ մանկավարժական միասնական պահանջների ապահովման համար: հատկապես կարևոր է սերտ շփումը դժվար դաստիարակվող, շեղվող վարք դրսևորող սովորողների ծնողների հետ:Կարևոր են նաև սովորողի ընտանիք այցելություններն նրան ուսումնական և դաստիարակչական գործընթացում օգնելու համար:

ՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՊՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
I	Գիտելիքի օր	
II	Հայաստանս՝ հայրենի բնօրրանս	
III	Իրավունքներն ու պարտականությունները	
IV	Ազատության գաղափարը	
V	Երկրիս պատմության էջերը	
VI	Ձրույց մասնագիտական կողմնորոշում թեմայով	
VII	Վատ և լավ սովորություններ	
VIII	Ազնվության գաղափարը	
IX	Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները	
X	Սիրո և հավատարմության մասին	
XI	Ինչպես չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը	
XII	Պատրաստվել առաջիկա քննություններին	
XIII	Առաջին կիսամյակում իմ ձեռքբերումներն ու թերացումները	
XIV	Այց մոտակա եկեղեցի	
XV	Հայրենիքի պաշտպանության կարևորությունը	
XVI	Բանակի բարելավմանն ու հզորացմանն ուղղված իմ առաջարկութ.	
XVII	Մայրենին, կրոնն ու մշակույթը՝ մեր հզորագույն զենքը	
XVIII	Հայկական ծեսերի պահպանումը	
XIX	Ինչպե՞ս հասկանալ դիմացինին: Սերունդների բախում	
XX	Մարդու ինքնուրույնությունը	
XXI	Տակտի զգացողությունը հասունության նշան է	
XXII	Ստեղծարարությունը սովորողների կյանքում	
XXIII	Իմ նախընտրած մասնագիտությունը	
XXIV	Ո՞վ եմ լինելու ես իմ երկրի համար	
XXV	Արդյո՞ք ես վերլուծում եմ իմ արարքները	
XXVI	Պատրա՞ստ եմ աշխատել համագործակցային միջավայրում	

XXVII	Քննությունը սթրես է, թե ինքնագնահատում	
XXVIII	Ուսումնառության իմ սեփական ռազմավարությունը	
XXIX	Ի՞նչ է ինձ անհրաժեշտ խոչընդոտները հաղթահարելու համար	
XXX	Ո՞վ է իմ ձախողումների և հաջողությունների պատասխանատուն	
XXXI	Իմ իդեալը	
XXXII	Ավագ դպրոցի դերը	
XXXIII	Մասնագիտական կողմնորոշում	
XXXIV	Ապագայի տեսլականը	

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	*Քննարկվող հարցերը*	*Համառոտ բովանդակությունը*
.08.2022	Ընթացիկ հարցերի քննարկում	Կարգապահություն , առաջադիմություն, բացակայությունն ուշացումներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվըդասարանում ----13

2. «Ռիսկային խմբի» ընտանիքներիթիվը՝------0

3. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում՝-----0

4. Խնամակալության տակ գտնվող երեխաներիթիվը՝----0

5. Դասերից հաճախակի բացակայողերեխաներ----0

6. Դժվար դաստիարակվողերեխաներ------0

Դասղեկ՝ Անահիտ Հարությունյան